

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿՈԼԵԳԻԱ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2013 թվականի նոյեմբերի 12-ի

թիվ 255

քաղ. Մոսկվա

Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքները կազմակերպելիս փոխգործակցության մասին հիմնադրույթի վերաբերյալ

«Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության եւ զարգացման մասին» 2010 թվականի սեպտեմբերի 21-ի համաձայնագրի 6-րդ հոդվածին համապատասխան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքները կազմակերպելիս փոխգործակցության մասին» հիմնադրույթը:

2. Ուժը կորցրած ճանաչել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման նորմատիվ իրավական ակտերի մասին» 2012 թվականի հունիսի 7-ի թիվ 65 որոշման երկրորդ պարբերությունը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման

օրվանից 30 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի նախագահ

Վ. Խրիստենկո

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի
նոյեմբերի 12-ի թիվ 255 որոշմամբ

Հ Ի Մ Ն Ա Դ Ի Ռ Ո Ւ Յ Թ

Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքները կազմակերպելիս փոխգործակցության մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Հիմնադրույթը կարգավորում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դեպարտամենտների եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազորված մարմինների (այսուհետ համապատասխանաբար՝ լիազորված մարմիններ, անդամ պետություններ) փոխգործակցության կարգը Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքները կազմակերպելիս (այսուհետ համապատասխանաբար՝ ինտեգրացիոն հատված, ինտեգրված համակարգ):

2. Հանձնաժողովը ինտեգրացիոն հատվածի, տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական ռեսուրսների նկատմամբ սեփականատիրոջ իրավունքները իրականացնում եւ պարտականությունները կրում է «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման, գործունեության եւ զարգացման մասին» 2010 թվականի

սեպտեմբերի 21-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 5-րդ հոդվածին համապատասխան:

3. Հանձնաժողովը ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքների կազմակերպումը իրականացնում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2013 թվականի մայիսի 29-ի թիվ 34 որոշմանը համապատասխան եւ «Պատվերների տեղադրման եւ ապրանքների մատակարարման պայմանագրերի կնքման, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կարիքների համար աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման մասին» հիմնադրույթի հիման վրա, որը հաստատվել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունվարի 25-ի թիվ 5 որոշմամբ (այսուհետ՝ Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթ):

4. Ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքների հիմնական կազմակերպական փուլերն են՝

1) ծրագրումը,

2) մրցութային հիմունքով աշխատանքներ կատարողների (ապրանքների մատակարարների, ծառայություններ մատուցողների) որոշումը,

3) աշխատանքների կատարումը (ապրանքների մատակարարումը, ծառայությունների մատուցումը),

4) տեխնիկական առաջադրանքին եւ օրացուցային պլանին համապատասխան կատարված աշխատանքների (մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների) հանձնում-ընդունում,

5) ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների շահագործում եւ ուղեկցում,

6) ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների արդիականացում (զարգացում):

II. Ծրագրում

5. Ինտեգրված համակարգի, այդ թվում՝ ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքները իրականացվում են Համաձայնագրի 11-րդ հոդվածին համապատասխան՝ ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ միջոցառումների ամենամյա ծրագրերի հիման վրա, որոնք մշակվում են հերթական տարվա համար Հանձնաժողովի բյուջեի նախագծի մշակման, համաձայնեցման եւ հաստատման համար սահմանված ժամկետներում:

6. Ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ միջոցառումների ծրագրի մեջ ընդգրկվում են հետեւյալ բաժինները (բաժինների ցանկերն ու անվանումները կարող են ճշգրտվել՝ ելնելով համապատասխան ժամանակահատվածում կատարման համար ծրագրված աշխատանքների ծավալից եւ կազմից)՝

1) ինտեգրված համակարգի ընդհանուր համակարգային նախագծում,

2) ինտեգրացիոն հատվածի ստեղծում ու զարգացում,

3) ինտեգրված համակարգի ազգային հատվածների ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքների համակարգում,

4) վստահության անդրսահմանային տարածքի ենթակառուցվածքի եւ վստահված երրորդ կողմի ծառայությունների ստեղծում,

5) ինտեգրացիոն հատվածի տեղեկատվական-հեռահաղորդակցման եւ հաշվողական ենթակառուցվածքի շահագործման ապահովում եւ ուղեկցում,

6) ինտեգրված համակարգի կիրառական ծրագրային ապահովման տեխնիկական աջակցություն եւ ուղեկցում,

7) օգտագործողների ուսուցում՝ տեղեկատվայնացման միջոցների հետ կապված աշխատանքների գծով, Հանձնաժողովի դեպարտամենտների եւ լիազորված մարմինների ներկայացուցիչներին ինտեգրված համակարգի հնարավորությունների ցուցադրություն:

7. Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի (այսուհետ՝ լիազորված դեպարտամենտ) հարցմամբ Հանձնաժողովի շահագրգիռ դեպարտամենտները լիազորված մարմինների հետ համաձայնեցնելուց հետո ձեւավորում եւ լիազորված դեպարտամենտ են ուղարկում ամփոփված առաջարկներ հետեւյալի մասով՝

1) «Մաքսային միության արտաքին եւ փոխադարձ առետրի ինտեգրված տեղեկատվական համակարգի ստեղծման» հայեցակարգով նախատեսված Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի ինտեգրված համակարգի միջոցներով իրագործման համար առաջարկվող ընդհանուր գործընթացների ցանկը, որը հաստատվել է Եվրասիական տնտեսական համայնքի միջպետական խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 19-ի թիվ 60 որոշմամբ (այսուհետ՝ ընդհանուր գործընթացներ),

2) ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի նկատմամբ ֆունկցիոնալ պահանջները:

8. Հաշվի առնելով Հանձնաժողովի դեպարտամենտների առաջարկները՝ լիազորված դեպարտամենտը ձեւավորում է՝

իրագործման համար առաջնահերթ ընդհանուր գործընթացների ցանկի նախագիծը (ինտեգրված համակարգի՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում դրանց իրագործման ժամկետներով),

ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ միջոցառումների ծրագրի նախագիծը:

Ինտեգրված համակարգի միջոցներով իրագործման համար առաջնահերթ ընդհանուր գործընթացները իրագործելու համար անհրաժեշտ միջոցառումները ընդգրկվում են միջոցառումների ծրագրի նշված նախագծի համապատասխան բաժինների մեջ:

Ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման եւ իրագործման համար առաջնահերթ ընդհանուր գործընթացների ցանկի հետ կապված միջոցառումների ծրագրի նախագծերը (ինտեգրված համակարգերի՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն

հատվածում դրանց իրագործման ժամկետներով) համաձայնեցվում են շահագրգիռ լիազորված մարմինների հետ եւ լիազորված դեպարտամենտի կողմից դրվում են Հանձնաժողովի կոլեգիայի քննությանն ու հաստատմանը:

9. Իրագործման համար առաջնահերթ ընդհանուր գործընթացների հաստատվող ցանկում ընդգրկված յուրաքանչյուր ընդհանուր գործընթացի համար (ինտեգրված համակարգի՝ հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածում դրանց իրագործման ժամկետներով) Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հրամանով Հանձնաժողովի դեպարտամենտներից նշանակվում է մեկ ֆունկցիոնալ պատվիրատու (այսուհետ՝ պատվիրատու), որը անհրաժեշտության դեպքում ամփոփում է Հանձնաժողովի մյուս շահագրգիռ դեպարտամենտների (այսուհետ՝ համապատվիրատուներ) պահանջները տվյալ ընդհանուր գործընթացի իրագործման մասով եւ ապահովում է ինտեգրված համակարգի միջոցներով դրա իրագործման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական բազայի ձեւավորումը:

III. Աշխատանքներ կատարողների (ապրանքների մատակարարների, ծառայություններ մատուցողների) որոշումը

10. Ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքներ կատարողները (ապրանքների մատակարարները, ծառայություններ մատուցողները) (այսուհետ՝ կատարողներ) ընտրվում են մրցութային հիմունքով՝ Պատվերների տեղադրման մասին հիմնադրույթին համապատասխան:

11. Անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտները՝ որպես կատարողներ, հավասար իրավունքներ ունեն ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման աշխատանքների (ապրանքների, ծառայությունների) գնման ընթացակարգերում մասնակցելիս:

IV. Աշխատանքների կատարումը (ապրանքների մատակարարումը, ծառայությունների մատուցումը)

12. Ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքների կատարումը (ապրանքների մատակարարումը, ծառայությունների մատուցումը), այդ թվում՝ աշխատանքների կատարման եւ ծառայությունների մատուցման արդյունքներով հաշվետու նյութերի համաձայնեցումը իրականացվում է կատարողների հետ կնքած աշխատանքների կատարման (ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման) պայմանագրերին համապատասխան:

13. Լիազորված դեպարտամենտը ապահովում է տեխնիկական առաջադրանքների (մասնավոր տեխնիկական առաջադրանքների) եւ ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի նախագծային փաստաթղթերի համաձայնեցումը, որոնք ապահովում են միջպետական տեղեկատվական փոխգործակցությունը, ինտեգրված համակարգում տեղեկատվության անվտանգությունը եւ ինտեգրված համակարգի ազգային հատվածների ստեղծման համար պատասխանատու լիազորված մարմինների, ինչպես նաեւ այլ շահագրգիռ լիազորված մարմինների հետ իրավաբանական ուժ ունեցող փաստաթղթերի էլեկտրոնային փոխանակումը:

14. Լիազորված դեպարտամենտը իրականացնում է ինտեգրված համակարգի՝ հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի շրջանակներում միջգերատեսչական եւ միջպետական տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերը կարգավորող տեխնիկական եւ կազմակերպչական փաստաթղթերի (այսուհետ՝ մեթոդական նյութեր) պատրաստման եւ ձեւակերպման կարգը սահմանող որոշումների եւ առաջարկությունների նախագծերի պատրաստումը, համաձայնեցումը շահագրգիռ լիազորված մարմինների հետ եւ Հանձնաժողովի կոլեգիայի քննությանը ներկայացնելը:

15. Ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ աշխատանքներ կատարելիս (ապրանքներ մատակարարելիս, ծառայություններ մատուցելիս) փոխգործակցության արդյունավետության բարձրացման

նպատակներով ստեղծվում են համատեղ նախագծային խմբեր՝ պատվիրատուների, համապատվիրատուների եւ կատարողների ներկայացուցիչների մասնակցությամբ (այսուհետ՝ նախագծային խմբեր): Նախագծային խմբերի կազմում կարող են ընդգրկվել շահագրգիռ լիազորված մարմինների ներկայացուցիչները:

16. Լիազորված դեպարտամենտը համակարգում է փոխգործակցությունը նախագծային խմբերի շրջանակներում հետեւյալ աշխատանքներն իրականացնելիս՝

1) ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի ստեղծման համար մասնավոր տեխնիկական առաջադրանքների փորձաքննություն ու համաձայնեցում,

2) էսքիզային, տեխնիկական եւ աշխատանքային նախագծերի փաստաթղթերի փորձաքննություն ու համաձայնեցում,

3) ծրագրային փաստաթղթերի փորձաքննություն ու համաձայնեցում,

4) ավտոմատացման օբյեկտների փոխգործակցության տեխնոլոգիական սխեմաների կազմում եւ նկարագրում,

5) էլեկտրոնային փաստաթղթերի միասնականացված ձեւերի մշակում,

6) ընդհանուր գործընթացների իրագործման հայեցակարգերի մշակում,

7) ընդհանուր գործընթացների իրագործման համար օգտագործվող տվյալների մոդելների նախագծում եւ նկարագրում,

8) տեղեկատվական փոխգործակցության կանոնների մշակում, որոնք ներառում են փաստաթղթերի ձեւեր, հաղորդագրությունների նկարագրություններ, տվյալների ձեւաչափեր, ստանդարտներ, ինտեգրացիոն հատվածի շրջանակներում միջգերատեսչական եւ միջպետական տեղեկատվական փոխգործակցության կանոններ եւ կանոնակարգեր,

9) ընդհանուր գործընթացների իրագործմանը եւ զարգացմանը վերաբերող նորմատիվ իրավական բազայի կատարելագործման առաջարկությունների մշակում:

17. Ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի ստեղծման համար մասնավոր տեխնիկական առաջադրանքները, ինտեգրացիոն

հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի համար նախագծային եւ շահագործման փաստաթղթերը համաձայնեցվում են շահագրգիռ լիազորված մարմինների հետ եւ հաստատվում են Հանձնաժողովի լիազորված դեպարտամենտի տնօրենի կողմից:

18. Պատվիրատուները լիազորված մարմինների հետ համաձայնեցնում են՝

1) ինտեգրված համակարգի միջոցներով իրագործվող ընդհանուր գործընթացների շրջանակներում միջպետական եւ միջգերատեսչական տեղեկատվական փոխգործակցության նկատմամբ ֆունկցիոնալ պահանջները,

2) ինտեգրված համակարգի միջոցներով ընդհանուր գործընթացներն իրագործելիս օգտագործվող փաստաթղթերի եւ տեղեկությունների կազմը,

3) նորմատիվ իրավական ակտերի նախագծերը, որոնցով սահմանվում են ինտեգրված համակարգի միջոցներով ընդհանուր գործընթացներն իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները,

4) ինտեգրացիոն հատվածի ենթահամակարգերի նկատմամբ ֆունկցիոնալ պահանջներ սահմանելու հետ կապված այլ հարցեր:

19. Պատվիրատուները լիազորված դեպարտամենտի հետ համատեղ իրականացնում են նախագծային խմբերի կողմից մեթոդական նյութերին համապատասխան պատրաստված՝ ինտեգրված համակարգի՝ Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի շրջանակներում միջգերատեսչական եւ միջպետական տեղեկատվական փոխգործակցության ընթացակարգերը կարգավորող տեխնիկական եւ կազմակերպչական փաստաթղթերի նախագծերի պատրաստումը, համաձայնեցումը շահագրգիռ լիազորված մարմինների հետ եւ Հանձնաժողովի կոլեգիայի քննությանը ներկայացնելը:

V. Կատարված աշխատանքների (մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների) հանձնում-ընդունում

20. Ինտեգրացիոն հատվածի ստեղծման եւ զարգացման ուղղությամբ կատարված աշխատանքների (մատակարարված ապրանքների, մատուցված

ծառայությունների) հանձնում-ընդունումն իրականացվում է Հանձնաժողովի եւ լիազորված մարմինների ներկայացուցիչներից ձեւավորվող ընդունող հանձնաժողովի կողմից:

Ընդունող հանձնաժողովի կազմն ու կարգավիճակը որոշվում են Հանձնաժողովի կոլեգիայի կողմից լիազորված մարմինների հետ համաձայնեցմամբ:

21. Ինտեգրացիոն հատվածի կամ դրա առանձին բաղադրիչների եւ ենթահամակարգերի ծավալն ու փորձարկման մեթոդները սահմանվում են Հանձնաժողովի կոլեգիայի կողմից հաստատված ծրագրերին եւ փորձարկման մեթոդիկաներին համապատասխան:

22. Կատարված աշխատանքների (մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների) հանձման-ընդունման ընթացքում ընդունող հանձնաժողովի կողմից իրականացվում է՝

1) մշակված փաստաթղթերի ամբողջության ու որակի ստուգում, որն իրենից ներկայացնում է հետեւյալի գնահատում՝

փաստաթղթերի կազմի կոմպլեկտայնություն՝ ինտեգրված համակարգի ստեղծման համար տեխնիկական առաջադրանքի պահանջներին, ինչպես նաեւ ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի ստեղծման համար մասնավոր տեխնիկական առաջադրանքների պահանջներին համապատասխան,

փաստաթղթերում առկա տեղեկությունների արժանահավատություն,

նկարագրվող երեւոյթների եւ գործընթացների կազմակերպչական, տեխնիկական եւ տնտեսական հայեցակետերի շարադրման հստակություն ու ամբողջականություն,

նախագծային որոշումների համապատասխանություն՝ ինտեգրված համակարգի ստեղծման համար տեխնիկական առաջադրանքի եւ ինտեգրացիոն համակարգի բաղադրիչների եւ ենթահամակարգերի ստեղծման համար մասնավոր տեխնիկական առաջադրանքների պահանջներին,

2) ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների՝ ինտեգրված համակարգի ստեղծման համար տեխնիկական առաջադրանքին, ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի ստեղծման համար մասնավոր

տեխնիկական առաջադրանքներին համապատասխանության աշխատունակության ստուգում:

23. Կատարված աշխատանքների (ապրանքների մատակարարում, ծառայությունների մատուցում) ընդունման արդյունքներով ընդունող հանձնաժողովը ստորագրում է հանձնման-ընդունման ակտ, որը ձեւակերպվում է աշխատանքների կատարման (ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման) պայմանագրով սահմանվող ձեւով եւ կարգով:

24. Որպես ինտեգրացիոն հատվածի, տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական ռեսուրսների սեփականատեր՝ Հանձնաժողովի սեփականության իրավունքների ապահովման նպատակներով, Համաձայնագրի 5-րդ հոդվածին համապատասխան, Հանձնաժողովի ինտեգրացիոն հատվածի, տեղեկատվական համակարգերի եւ տեղեկատվական ռեսուրսների ստեղծման, զարգացման (արդիականացման), լրամշակման աշխատանքների արդյունքում ստացված ամբողջ գիտատեխնիկական արտադրանքը ենթակա է պարտադիր հանձնման ինտեգրված համակարգի ալգորիթմերի եւ ծրագրերի ֆոնդ, որը նախատեսված է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 7-ի թիվ 65 որոշմամբ:

25. Ինտեգրացիոն հատվածի առանձին բաղադրիչների եւ ենթահամակարգերի համար կարող է նախատեսվել փորձնական շահագործում, որի անցկացման ժամկետները եւ աշխատանքների կազմը սահմանվում են Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հրամանով:

VI. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների շահագործումը եւ ուղեկցումը

26. Ինտեգրացիոն հատվածի մշակված ծրագրա-ապարատային միջոցների շահագործման մեջ դնելն իրականացվում է Հանձնաժողովի կոլեգիայի նախագահի հրամանի հիման վրա, որում սահմանվում են՝

- 1) շահագործման մեջ դնելուն ենթակա օբյեկտները,

2) շահագործման մեջ դնելու հետ կապված հիմնական միջոցառումները, որանց կատարման ժամկետները եւ պատասխանատու կատարողները:

27. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների շահագործման մեջ դնելու ծրագիրը ներառում է հետեւյալ հիմնական միջոցառումները՝

1) Հանձնաժողովի աշխատակիցների պատրաստումը,

2) անհրաժեշտ մեթոդական նյութերի տարածումը,

3) շահագործման օբյեկտների վրա ծրագրա-ապարատային միջոցների տեղադրումն ու կարգավորումը, մուտք գործելու իրավունքների տարանջատումը,

4) ծրագրա-ապարատային միջոցների համալիր թեստավորում (գործունեության ստուգումը):

28. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցները շահագործման մեջ դնելու միջոցառումների մանրամասն ցանկը նշվում է Հանձնաժողովի կողմից կատարողների հետ կնքվող աշխատանքների կատարման (ապրանքների մատակարարման, ծառայությունների մատուցման) պայմանագրերում:

29. Հանձնաժողովն ինտեգրացիոն հատվածի շահագործման ընդունած ծրագրա-ապարատային միջոցների առնչությամբ կատարողների հետ կնքում է պայմանագրեր հետեւյալ ուղեկցման աշխատանքների անցկացման մասին՝

1) Հանձնաժողովի աշխատակիցներին եւ անհրաժեշտության դեպքում շահագրգիռ լիազորված մարմինների ներկայացուցիչներին որակյալ օգնության (տեխնիկական օժանդակության) ցուցաբերում,

2) բաղադրիչների աշխատունակության վերականգնում աշխատանքի խափանումներից եւ ընդհատումներից հետո,

3) աշխատանքում սխալների (թերությունների) բացահայտում եւ վերացում,

4) ծրագրա-ապարատային միջոցների գործունեության օպտիմալացում,

5) տվյալների բազաների բնութագրերի, միջերեսի (ինտերֆեյսի), կառուցվածքի, տեղեկատվական եւ ծրագրային բաղադրիչների կատարելագործում, որոնք չեն հանգեցնում ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման համար տեխնիկական առաջադրանքներով եւ ինտեգրացիոն հատվածի բաղադրիչների եւ ենթահամակարգերի ստեղծման համար մասնավոր տեխնիկական առաջադրանքներով սահմանված գործառույթների կազմի փոփոխությունների,

6) շահագործման օբյեկտների սպասարկիչների (սերվերների) եւ աշխատանքային կայանների վրա փոփոխությունների (թարմացումների) տեղադրում եւ կարգավորում,

7) ծրագրային փաստաթղթերում փոփոխությունների կատարում, այդ թվում՝ ըստ անդամ պետությունների հայտերի:

VII. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների արդիականացում (զարգացում)

30. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների արդիականացումը (զարգացումը) իրականացվում է Հանձնաժողովի գործառույթների ընդլայնման (փոփոխման), նոր ընդհանուր գործընթացների իրագործման եւ ավելի վաղ իրագործված ընդհանուր գործընթացների կատարելագործման, Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայում փոփոխություններ կատարելու միջոցով:

31. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների արդիականացումը (զարգացումը) իրականացվում է հետեւյալ սկզբունքներին համապատասխան՝

1) ինտեգրացիոն հատվածի գործառույթների համապատասխանություն Հանձնաժողովի կողմից լուծվող խնդիրներին,

2) Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայում առկա փոփոխությունների նկատմամբ ծրագրա-

ապարատային միջոցների հաջորդում, ադապտացիա,

3) տեղեկատվության անվտանգության եւ տեխնիկական պաշտպանության ապահովում,

4) տեղեկատվական-ծրագրային եւ տեխնիկական մոտեցումների (լուծումների) ստանդարտացում ու միասնականացում:

32. Ինտեգրացիոն հատվածի ծրագրա-ապարատային միջոցների արդիականացումը (զարգացումը) իրականացվում է հետեւյալ միջոցներով՝

1) Հանձնաժողովի տեղեկատվական ռեսուրսների կազմի ընդլայնում,

2) Հանձնաժողովի գործառույթների իրագործման համար անհրաժեշտ կիրառական ծրագրային ապահովման արդիականացում (լրամշակում),

3) ցանցային եւ հաշվողական ենթակառուցվածքի արդիականացում (զարգացում),

4) տեղեկատվական անվտանգության միջոցների կատարելագործում:

33. Ինտեգրացիոն հատվածի արդիականացման (զարգացման) միջոցառումներն ընդգրկվում են ինտեգրված համակարգի ստեղծման եւ զարգացման ծրագրի մեջ՝ սույն Հիմնադրույթի II բաժնով սահմանված կարգով:
